



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հուլիսի 2025 թվականի N 1010-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 867 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման, դեղերի մեծածախ իրացման, բժշկական արտադրատեսակների արտադրության, բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» N 867 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) N 5 հավելվածի 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«17. Բժշկական հիմնական սարքավորումների՝ ըստ սարքի շահագործման ինտենսիվության, շահագործման թույլատրելի ժամկետները սահմանված են սույն

որոշման N 12 հավելվածի «N 12 հավելվածի պարզաբանում» և N 13 հավելվածի «N 13 հավելվածի պարզաբանում» բաժիններում:».

2) N 5 հավելվածի 18-րդ կետը «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վտանգավոր թափոնների վնասագերծման ոլորտում համապատասխան լիցենզիա ունեցող որևէ կազմակերպության հետ կնքված պայմանագիրը» բառերից հետո լրացնել «, սույն կարգի 19.5-րդ կետով սահմանված որակավորում ունեցող անձի մասին տեղեկատվություն՝ կցելով վերջինիս մասնագիտական կրթության և պահանջվող թեմաներով շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) կրեդիտներ ունենալու մասին փաստը հավաստող փաստաթղթերը» բառերով.

3) N 5 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 19.5-րդ կետով՝

«19.5. Արտահիվանդանոցային և հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներն իրենց կառուցվածքում պետք է ունենան որակի ապահովման պատասխանատու անձանց հաստիքներ՝ ապահովելով N 12 հավելվածի «N 12 հավելվածի պարզաբանում» և N 13 հավելվածի «N 13 հավելվածի պարզաբանում» բաժիններում որակի ապահովման պատասխանատու անձանց համար սահմանված պահանջները: Սույն կետի իմաստով բժշկական օգնության և սպասարկման որակի ապահովման պատասխանատուներ են համարվում՝ վերջին 5 տարվա ընթացքում Առողջապահական ծառայությունների որակի բարելավման և անվտանգության վերաբերյալ թեմաներով առնվազն 50 ՇՄԶ կրեդիտ ձեռք բերած հետևյալ անձինք՝

1) ավագ բուժաշխատողը.

2) բակալավրի ծրագրով իրականացված մասնագիտական կրթություն ունեցող միջին բուժաշխատողը.

3) «Հանրային առողջություն և առողջապահություն» մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական աստիճան ունեցող կամ «Առողջապահության կառավարում և վարչարարություն» մասնագիտացմամբ մագիստրոսի կրթական աստիճան ունեցող կամ «Առողջապահության կազմակերպում և կառավարում» մասնագիտացմամբ բարձրագույն կրթություն ունեցող անձը:».

4) N 12 հավելվածի 8.2-րդ կետի «ԿԱԴՐԱՅԻՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԿԱԴՐԱՅԻՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ»

Բժշկական բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող անձ՝ կրթության փաստը հավաստող վկայականի առկայությամբ:».

5) N 12 հավելվածի «N 12 հավելվածի պարզաբանում» բաժնի «Ընդհանուր դրույթներ» գլուխը վերջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություններով՝

ա. հետևյալ բովանդակությամբ.

«• Բժշկական հիմնական սարքավորումների՝ ըստ սարքի շահագործման ինտենսիվության, շահագործման թույլատրելի ժամկետները սահմանված են ստորև ներկայացված աղյուսակով.

	Սարքավորում	Թույլատրելի ժամկետներ				Շահագործման ինտենսիվություն՝ տարեկան օգտագործման քանակ ըստ սարքի աշխատանքի չափման միավորի		
		արտադրման տարեթվից սկսած			վերականգնման (refurbished) տարեթվից սկսած			
	1	2	3	4	5	6	7	8
		շահագործման բարձր ինտենսիվություն	շահագործման միջին ինտենսիվություն	շահագործման ցածր ինտենսիվություն				
	անվանում	տարի				բարձր	միջին	ցածր
1.	ռենտգեն	11	13	15	10	20.000 և ավել	10.000- 20.000	մինչև 10.000
2.	շարժական ռենտգեն	11	13	15	10	6.000 և ավել	3.000- 6.000	մինչև 3.000
3.	ռադիոսկոպ	9	11	13	10	4.000 և ավել	2.000- 4.000	մինչև 2.000
4.	ինտերվենցիոն ռադիոլոգիայի ինտեգրված սարք	9	11	13	10	4.000 և ավել	2.000- 4.000	մինչև 2.000

5.	G-arm	9	11	13	10	1.500 և ավել	750- 1.500	մինչև 750
6.	C-arm	9	11	13	10	2.000 և ավել	1000- 2.000	մինչև 1.000
7.	անգիոգրաֆ	9	11	13	10	4.000 և ավել	2.000- 4.000	մինչև 2.000
8.	ուլտրաձայնային ախտորոշման սարք	10	12	15	12	12.000 և ավել	7.500- 12.000	մինչև 7.500
9.	համակարգչային տոմոգրաֆ	9	11	13	10	15.000 և ավել	7.500- 15.000	մինչև 7.500
10.	մագնիսառեզո- նանսային տոմոգրաֆ	13	13	13	8	-	-	-
11.	մամոգրաֆ	9	10	13	10	7.000 և ավել	3.500- 7.000	մինչև 3.500
12.	լիտոտրիպտեր	9	11	13	10	3.000 և ավել	2.000- 3.000	մինչև 2.000
13.	օստեոդենսիտոմետր	9	11	13	10	10.000 և ավել	5.000- 10.000	մինչև 5.000
14.	մեկ ֆոտոն էմիսիոն շերտագիր	8	9	10	10	4.000 և ավել	2.000- 4.000	մինչև 2.000

1) սույն աղյուսակի 1-ից 14-րդ տողերով սահմանված սարքավորումները, որոնք ունեն իրենց զբաղեցրած տողի 8-րդ սյունակով սահմանված շահագործման ինտենսիվության մակարդակը (ցածր), կարող են օգտագործվել առավելագույնը՝ նույն տողի 4-րդ սյունակով սահմանված ժամկետով.

2) սույն աղյուսակի 1-ից 14-րդ տողերով սահմանված սարքավորումները, որոնք ունեն իրենց զբաղեցրած տողի 7-րդ սյունակով սահմանված շահագործման ինտենսիվության մակարդակը (միջին), կարող են օգտագործվել առավելագույնը՝ նույն տողի 3-րդ սյունակով սահմանված ժամկետով.

3) սույն աղյուսակի 1-ից 14-րդ տողերով սահմանված սարքավորումները, որոնք ունեն իրենց զբաղեցրած տողի 6-րդ սյունակով սահմանված շահագործման ինտենսիվության մակարդակը (բարձր), կարող են օգտագործվել առավելագույնը՝ սույն տողի 2-րդ սյունակով սահմանված ժամկետով.

4) սույն աղյուսակի 1-ից 14-րդ տողերով սահմանված սարքավորումների առավելագույն շահագործման ժամկետը հաշվարկվում է սարքի արտադրման տարեթվից, և հաշվարկը կատարվում է յուրաքանչյուր տարի՝ հաշվի առնելով շահագործման ինտենսիվությունը.

5) սույն աղյուսակի 1-ից 14-րդ տողերով սահմանված սարքավորումները չեն կարող շահագործվել իրենց զբաղեցրած տողի 4-րդ սյունակով սահմանված ժամկետից ավել՝ անկախ սարքի շահագործման ինտենսիվությունից, բացառությամբ 4-րդ սյունակում նշված ժամկետի լրանալու դեպքում արտադրողի կողմից գործարանային պայմաններում վերականգնված (refurbished) սարքերի, որոնց շահագործումը կարող է շարունակվել մինչև վերականգնված սարքի՝ սույն աղյուսակում զբաղեցրած տողի 5-րդ սյունակով սահմանված ժամկետը.

6) Հայաստանի Հանրապետության տարածք բժշկական արտադրատեսակների (այդ թվում՝ օգտագործված բժշկական արտադրատեսակների) ներմուծման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 30-ի N 429-Ն որոշմամբ:»,
բ. հետևյալ բովանդակությամբ.

«• Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունները, որոնք սպասարկում են 45.000-ից ավելի բնակչություն, իրենց կառուցվածքում պետք է ունենան որակի ապահովման պատասխանատու անձի մեկ հաստիք: Սույն պարբերության մեջ նշված խմբում չընդգրկված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները և այլ արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներն իրենց կառուցվածքում բժշկական օգնության և սպասարկման որակի ապահովման պատասխանատու անձի հաստիք կարող են չունենալ, այս դեպքում բժշկական օգնության և սպասարկման որակի ապահովման պատասխանատու անձի պարտականությունները բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի գործադիր մարմնի

ղեկավարի հրամանով հանձնարարվում են աշխատողներից որևէ մեկին, ով պետք է համապատասխանի սույն որոշման N 5 հավելվածի 19.5-րդ կետի պահանջներին:».

6) N 13 հավելվածի 99.3-րդ կետի **«ԿԱԴՐԱՅԻՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ»** գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԿԱԴՐԱՅԻՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ»

Բժշկական միջին մասնագիտական կրթություն ունեցող անձ՝ կրթության փաստը հավաստող վկայականի առկայությամբ:».

7) N 13 հավելվածի 101-րդ կետի «N 13 հավելվածի պարզաբանում» բաժնում «•Հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողը, յուրաքանչյուր առանձին բաժանմունքում, պետք է կազմակերպի միջին և կրտսեր բուժաշխատողների շուրջօրյա հերթապահություն՝ հիվանդանոցում ապահովելով նվազագույնը մեկ հերթապահ ավագ բուժաշխատող (բժշկական պաշտոնը սահմանվում է՝ 1 պաշտոն - 80 մահճակալի հաշվով):» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«•Հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողը, յուրաքանչյուր առանձին բաժանմունքում, պետք է ապահովի միջին և կրտսեր բուժաշխատողների շուրջօրյա հերթապահություն: Մարզերում հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողը պետք է ապահովի առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեություն ինքնուրույն իրականացնելու թույլտվություն ունեցող ավագ բուժաշխատողների շուրջօրյա հերթապահություն՝ յուրաքանչյուր 80 մահճակալի հաշվով: Երևան քաղաքում հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողը, նշված պայմանով իրականացվող բժշկական օգնության և սպասարկման յուրաքանչյուր տեսակի մասով՝ բացառությամբ համաճարակաբանական, կլինիկական դեղորայքային և անեսթեզիոլոգիական տեսակների, պետք է ապահովի առողջապահության բնագավառում մասնագիտական գործունեություն ինքնուրույն իրականացնելու թույլտվություն ունեցող ավագ բուժաշխատողների շուրջօրյա հերթապահություն՝ անկախ մահճակալների թվից: Բուժաշխատողների մասնագիտական կրթությունը պետք է համապատասխանի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողին տրված լիցենզիայով նախատեսված,

հիվանդանոցային պայմաններում իրականացման ենթակա բժշկական օգնության և սպասարկման տեսակներին: Սույն հավելվածի իմաստով, բուժաշխատողների շուրջօրյա հերթապահությունն ապահովված է համարվում հերթապահությանն առնվազն 4-ից ավել համապատասխան բուժաշխատողի ներգրավվածության դեպքում, եթե սույն հավելվածով, բժշկական օգնության և սպասարկման առանձին տեսակների մասով՝ մահճակալների թվով պայմանավորված այլ (գերազանցող) կարգավորում առկա չէ:».

8) N 13 հավելվածի 101-րդ կետի «N 13 հավելվածի պարզաբանում» բաժինը վերջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություններով՝

ա. հետևյալ բովանդակությամբ.

«• Բժշկական հիմնական սարքավորումների՝ ըստ սարքի շահագործման ինտենսիվության, շահագործման թույլատրելի ժամկետները սահմանված են ստորև ներկայացված աղյուսակով.

	Սարքավորում	Թույլատրելի ժամկետներ				Շահագործման ինտենսիվություն՝ տարեկան օգտագործման քանակ ըստ սարքի աշխատանքի չափման միավորի		
		արտադրման տարեթվից սկսած		վերականգնման (refurbished) տարեթվից սկսած				
	1	2	3	4	5	6	7	8
		շահագործման բարձր ինտենսիվություն	շահագործման միջին ինտենսիվություն	շահագործման ցածր ինտենսիվություն				
	անվանում	տարի				բարձր	միջին	ցածր
1.	ռենտգեն	11	13	15	10	20.000 և ավել	10.000- 20.000	մինչև 10.000
2.	շարժական ռենտգեն	11	13	15	10	6.000 և ավել	3.000- 6.000	մինչև 3.000
3.	ռադիոսկոպ	9	11	13	10	4.000 և ավել	2.000- 4.000	մինչև 2.000

4.	ինտերվենցիոն ռադիոլոգիայի ինտեգրված սարք	9	11	13	10	4.000 և ավել	2.000- 4.000	մինչև 2.000
5.	G-arm	9	11	13	10	1.500 և ավել	750- 1.500	մինչև 750
6.	C-arm	9	11	13	10	2.000 և ավել	1000- 2.000	մինչև 1.000
7.	անգիոգրաֆ	9	11	13	10	4.000 և ավել	2.000- 4.000	մինչև 2.000
8.	ուլտրաձայնային ախտորոշման սարք	10	12	15	12	12.000 և ավել	7.500- 12.000	մինչև 7.500
9.	համակարգչային տոմոգրաֆ	9	11	13	10	15.000 և ավել	7.500- 15.000	մինչև 7.500
10.	մագնիսառեզո- նանսային տոմոգրաֆ	13	13	13	8	-	-	-
11.	մամոգրաֆ	9	10	13	10	7.000 և ավել	3.500- 7.000	մինչև 3.500
12.	լիտոտրիպտեր	9	11	13	10	3.000 և ավել	2.000- 3.000	մինչև 2.000
13.	օստեոդենսիտոմետր	9	11	13	10	10.000 և ավել	5.000- 10.000	մինչև 5.000
14.	մեկ ֆոտոն էմիսիոն շերտագիր	8	9	10	10	4.000 և ավել	2.000- 4.000	մինչև 2.000

1) սույն աղյուսակի 1-ից 14-րդ տողերով սահմանված սարքավորումները, որոնք ունեն իրենց զբաղեցրած տողի 8-րդ սյունակով սահմանված շահագործման ինտենսիվության մակարդակը (ցածր), կարող են օգտագործվել առավելագույնը՝ նույն տողի 4-րդ սյունակով սահմանված ժամկետով.

2) սույն աղյուսակի 1-ից 14-րդ տողերով սահմանված սարքավորումները, որոնք ունեն իրենց զբաղեցրած տողի 7-րդ սյունակով սահմանված շահագործման ինտենսիվության մակարդակը (միջին), կարող են օգտագործվել առավելագույնը՝ նույն տողի 3-րդ սյունակով սահմանված ժամկետով.

3) սույն աղյուսակի 1-ից 14-րդ տողերով սահմանված սարքավորումները, որոնք ունեն իրենց զբաղեցրած տողի 6-րդ սյունակով սահմանված շահագործման ինտենսիվության մակարդակը (բարձր), կարող են օգտագործվել առավելագույնը՝ նույն տողի 2-րդ սյունակով սահմանված ժամկետով.

4) սույն աղյուսակի 1-ից 14-րդ տողերով սահմանված սարքավորումների առավելագույն շահագործման ժամկետը հաշվարկվում է սարքի արտադրման տարեթվից, և հաշվարկը կատարվում է յուրաքանչյուր տարի՝ հաշվի առնելով շահագործման ինտենսիվությունը.

5) սույն աղյուսակի 1-ից 14-րդ տողերով սահմանված սարքավորումները չեն կարող շահագործվել իրենց զբաղեցրած տողի 4-րդ սյունակով սահմանված ժամկետից ավել՝ անկախ սարքի շահագործման ինտենսիվությունից, բացառությամբ 4-րդ սյունակում նշված ժամկետի լրանալու դեպքում արտադրողի կողմից գործարանային պայմաններում վերականգնված (refurbished) սարքերի, որոնց շահագործումը կարող է շարունակվել մինչև վերականգնված սարքի՝ սույն աղյուսակում զբաղեցրած տողի 5-րդ սյունակով սահմանված ժամկետը.

6) Հայաստանի Հանրապետության տարածք բժշկական արտադրատեսակների (այդ թվում՝ օգտագործված բժշկական արտադրատեսակների) ներմուծման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 30-ի N 429-Ն որոշմամբ:»,

բ. հետևյալ բովանդակությամբ.

«• Հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներն իրենց կառուցվածքում պետք է ունենան որակի ապահովման պատասխանատու անձանց հաստիքներ՝

1) Երևան քաղաքում՝

ա. մինչև 100 մահճակալ և մինչև 200 բուժաշխատող ունեցող՝ հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներ՝ մեկ հաստիք,

բ. մինչև 100 մահճակալ և 200-ից ավել բուժաշխատող ունեցող՝ հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներ՝ առնվազն երկու հաստիք, որից մեկը՝ ղեկավարի,

գ. 100-ից մինչև 200 մահճակալ կամ 200-ից 300 բուժաշխատող ունեցող՝ հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներ՝ առնվազն երկու հաստիք, որից մեկը՝ ղեկավարի,

դ. 201 և ավել մահճակալ կամ 300-ից ավել բուժաշխատող ունեցող՝ հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներ՝ առնվազն երեք հաստիք, որից մեկը՝ ղեկավարի.

2) Հայաստանի Հանրապետության մարզերում՝

ա. մինչև 150 մահճակալ և մինչև 200 բուժաշխատող ունեցող՝ հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներ՝ մեկ հաստիք,

բ. 150-ից ավել մահճակալ և 200-ից ավել բուժաշխատող ունեցող հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներ՝ առնվազն երկու հաստիք, որից մեկը՝ ղեկավարի:

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների նկատմամբ, որոնք միաժամանակ ընդգրկված են սույն պարբերությամբ սահմանված մեկից ավելի խմբերում, կիրառելի են այն խմբի համար նախատեսված պահանջները, որով նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման որակի ապահովման պատասխանատու անձանց ավելի շատ հաստիքներ:»,

գ. հետևյալ բովանդակությամբ.

«• Հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները մասնագիտական խորհրդատվություններ և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծառայություններ կարող են մատուցել նաև չհոսպիտալացված պացիենտներին:»:

2. Սույն որոշման 1-ին կետի՝

1) 2-րդ և 3-րդ ենթակետերը, 5-րդ և 8-րդ ենթակետերի «բ» պարբերություններն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը.

2) 4-րդ, 6-րդ, 7-րդ ենթակետերը և 8-րդ ենթակետի «գ» պարբերությունն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակումից 6 ամիս հետո.

3) 1-ին ենթակետը, 5-րդ և 8-րդ ենթակետերի «ա» պարբերություններն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակումից 2 տարի հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱԴԵՏ

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան